

ԱՎԱՆԻ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Հայերեն վիմագրերում և ձեռագրերում երբեմն կարելի է հանդիպել տարբեր գաղտնագրերի, որոնք, որպես կանոն, փոքր ծավալի հիշատակումներ են. հիմնականում պարունակում են ծածկագիր անուններ, թվականներ, որոնք անմիջաբար կապվում են տվյալ հուշարձանի պատմությանը՝ գրչի, պատվիրատուի, փորագրողի անուններ են, գրչության թվական և այլն:

Գաղտնագրման եղանակների տեսակներով էլ հայ ծածկագրության մեջ դասակարգվել են ծածկագրերը, որոնց առավել մանրամասն և համակարգային անդրադարձել է Աշոտ Աբրահամյանն իր «Հայ գրի և գրչության պատմություն», «Հայոց գիր և գրչություն», «Հայկական ծածկագրություն» աշխատություններում: Հայտնի են սյունագիր կամ սյունակետագիր, եղբայրագիր, փոխարինագիր և այլ ծածկագրեր, որոնց զգալի մասը ժամանակի ընթացքում վերծանվել և ընթերցվել է մասնագետների կողմից:

Թե երբ և ինչպես է ի հայտ եկել ծածկագիրը կամ որն է հայկական ծածկագրի առաջին տեսակը, ստույգ նշել հնարավոր չէ, սակայն պարզ է, որ արդեն VII դ. այն կիրառվել է, քանի որ այդ շրջանից մեզ է հասել մի հետաքրքիր ծածկագիր վկայություն:

XX դ. առաջին կեսին Երևանի հին թաղամասերից մեկի՝ Ավանի կաթողիկե եկեղեցու տարածքում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են հնագիտական մի շարք արժեքավոր իրեր, որոնց թվում՝ մի ծածկագիր արձանագրություն, որի վրա եղել են հայերենով և հունարենով գրություններ: Այդ արձանագրության մասին 1945 թ. հայտնի վիմագրագետ, հնագետ Կ. Ղաֆադարյանը հրատարակել է «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը» վերնագրով մի հոդված, որում մանրամասն քննել է ինչպես բուն ծածկագրի, այնպես էլ դրա փորագրողի հարցը:

Հետաքրքական այս նյութը՝ առավել մատչելի կերպով, ներկայացնում ենք ստորև:

Հայտնի է, որ Հայաստանում քաղկեդոնական դավանանքի տարածման նպատակով Բյուզանդական կայսրերը բավական լուրջ ջանքեր են ներդրել: VI դարավերջին Բյուզանդական Մորիկ կայսեր անմիջական ցուցում հակաթոռ կաթողիկոս է կարգվել Հովհան Բագարանցին (591-601 թթ.), որի նստավայրը Ավանի

նորաշեն կաթողիկե (Օիրանավոր) եկեղեցին էր (այն այսօր գտնվում է կիսավեր վիճակում, ամբողջությամբ բացակայում է ծածկը, փլված է արևելյան պատի մեծ մասը):

Եկեղեցու տարածքում պեղումների արդյունքում հայտնաբերվել է Հայոց կաթողիկոս Եզր Ա Փառածնակերտցու (630-641) անունը կրող մի արձանագրություն (այժմ ցուցադրվում է Հայաստանի պատմության թանգարանում), որը եղել է արևելյան պատին: Արձանագրության մեջ կարդացվում է՝

1. ՏՐ ԵԶՐ ԶՌԼԿԶ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՇՄԱ-
2. ԲԻՏ ԱՉԼՈՏ ԿՈ ՊԵՈ ՍԱՄԷՂ ՇՌԱՌԼՔ

Վիմագիրը հայտնի է երկլեզվյան անունով, քանի որ երկրորդ տողում առկա է հունարեն գիր, որ թարգմանվում է «ճառայ Աստուծոյ»: Արձանագրության առաջին տողի ՏՐ պատվի նշանով համառոտագրությունը, ձայնավորի վերականգնմամբ կարդացվում է «Տէր», իսկ երկրորդ տողի վերջում դարձյալ պատվի նշանով համառոտված Ք-ն պետք է կարդալ «Քրիստոս»: Հայտնի է, որ Քրիստոս անվան համառոտումը ՔՄ-ն է՝ Ք(ԲԻՍՏՈ)Ս, սակայն վիմագրի վնասվածության պատճառով երկրորդ տառը չի երևում (տվյալ դեպքում՝ Ի, որով բառը կկարդացվի Ք(ԲԻՍՏՈՍ)Ի):

Արձանագրության առաջին և երկրորդ տողերում առկա են առաջին հայացքից հայերենին ոչ հատուկ բաղաձայն հնչյունների կուտակումներ՝ ԶՌԿԼԶ և ՇՌԱՌԼ, որոնք իրականում իրենցից ներկայացնում են փոխարինագիր ծածկագրեր: Դրանց բանալին հայոց այբուբենի թվային դասակարգումն է, այլ կերպ ասած՝ միավորի դիմաց՝ հազարավոր, հազարավորի դիմաց միավոր, տասնավորի դիմաց հարյուրավոր, հարյուրավորի դիմաց՝ տասնավոր (տե՛ս հայոց այբուբենի աղյուսակը՝ սույն կայքի ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ մասի Նյութեր բաժնում): Ըստ այդմ՝ ԶՌԿԼԶ - ն պետք է բացել՝ Զ = 2, Ռ = Ա, Լ = 3, Կ = Ռ, Զ = 3, իսկ ՇՌԱՌԼ - ն՝ Շ = Ծ, Ռ = Ա, Ա = Ռ, Ռ = Ա, Լ = 3:

Արձանագրության մեջ հանդիպող Սամեղ բառն էլ անձնանուն է՝ Սամուել անվան հնչյունական տարբերակ, որ հաճախադեպ է ձեռագրերում: Հավանաբար հենց այս Սամեղն էլ արձանագրության գրողն է:

- Արձանագրությունը կարելի է այսպիսով կարդալ՝
- «ՏԷՐ ԵԶՐ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՇՄԱՐԻՏ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ:
ՍԱՄԷՂ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ»:



Լուսանկարներում՝ Ավանի տաճարի մուտքը և Եզր կաթողիկոսի արձանագրությունը:

Նյութը պատրաստեց Խաչիկ Հարությունյանը